

# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52<sup>ր</sup> ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 21

24 ՄԱՅԻՍ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագրիցն է Կ. Պոլսոյ համար քառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 բուլլի: Թղթաստրական ծախքը հմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտուն: Այն բաժանորդները որոնք պակաս բերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն հմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայմաններով:

Ձեռն-Քէ Կը ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

در علیاده غلطاده (ماسيس) غزته سی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Դալաթիա



Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

# UNIVERSITY

OF THE STATE

OF NEW YORK

1880

1880

1880

1880

THE UNIVERSITY OF THE STATE OF NEW YORK  
OFFICE OF THE COMMISSIONER OF EDUCATION  
ALBANY, N. Y.

1880

1880

1880

1880

1880


1880

1880

1880

SCOTT'S EMULSION

SCOTT'S EMULSION




SCOTT'S EMULSION

SCOTT'S EMULSION

SCOTT'S EMULSION

SCOTT'S EMULSION



## ԲՈՒՆՈՐ ԵՐԱԽԱՆՈՒՄ ԵՎ ԿԵՆՏՐՈՆ

Արհեստագործական մեքենաները, սակայն անհնար է շատերը ստանալ ցածր և անհասկանալի մեքենաներ: Առաջին պատճառն է տրուել մանուկներուն,



## SCOTT'S EMULSION

որոնք ակադամ հանած ատենին՝ բոլոր ցանկեր և աղետները զանոնք կը փրկէ:

### ԸՍԳԻՈՒԹԻ ԲԱՆԱԿԱՐԱՐՈՒԹԻՈՒՆ

տղայական վիշտերու համար՝ շատ կարևոր տղայական դեղ մըն է. անոնց կատարեալ առողջութիւն կուտայ և զանոնք նոյն վիճակի մէջ կը պահէ: Թոյլ Զեր զաւակները առողջ և զօրաւոր մեծնան շնորհիւ:

### ԸՍԳԻՈՒԹԻ ԲԱՆԱԿԱՐԱՐՈՒԹԻՈՒՆ

Հիշեալ վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

24

Բոլոր բեռնատարները և բեռնափոխակները ինչ օրին:

## ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

## ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

### ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ սրեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ դաւաղաններ եւ այլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-Խողոց, Թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 գեղջ: Գործածուած գոհարեղէնները եթէ մնաստուած չեն՝ 100ին 10 զեղչով ետ կ'առնուին: Իսկ ապառիկ գնողներէն՝ 100ին 15 զեղչով:

## ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կըսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒՆԱՆ ԵՎ Յ. ԻՍԱԳՈՒՆՆԻՆԻ Զինաստանէն, Հնդկաստանէն, Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած բարձր, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահէ Գափու, ձէլալ պէյ Խան, Թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն գնելու պէտք ունեցողները կրնան դիմել Կամուրջին. գլուխը լրացրովաճառ Միսաք աղային:

# ՄԱՍԻՆ

52<sup>րդ</sup> ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 21

24 ՄԱՅԻՍ 1903

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեսութիւն մը Ռսանաւորի Մրցման վրայ. Մ. ԱճԷՄԵԱՆ:—Բաժնուած սիրեք (Բանաստեղծութիւն) ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻԲ:—Յիշատակ մը. Գ. ՊՈՒՊԼԻ:—Շա՛ս ուե (Նորավեպ) ԳԼԱՆԻԿ:—Վաղորդայնը (Սիրերգ) Ֆ.—Արուեստի աշխարհէն. ԵՐՈՒԱՆԴ ԶԱՎՈՒՇԵԱՆ:—Պատրիարքական տեղեկագիր՝ լուծած կիներու մասին:

## ՏԵՍՈՒԹԻՒՆ ՍԸ

### ՈՏԱՆԱԽՈՐԻ ՄՐՅՄԱՆ ՎՐԱՅ

#### “ՄԱՍԻՆ”Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նկատելի է որ Մասիսի բացած ոտանաւորի մրցումին մասնակցողներուն թիւը սահմանափակ եղած է, մրցում որուն նիւթը՝ «Բաժնուած սիրտեր» և ինչ ինչ պայմանները նախապէս սահմանուած էին. արդարեւ քառասուն մրցակիցներ միայն կը ներկայանան պատկաւորի դալինին խելու յոյսով. ճիշդ Ֆրանս. Ակադեմիոյ անմահներուն թիւը: Զեր երկարամեայ փորձառութեամբ անոն ձեռնպահութիւնը կը վերադրէք ոչ այնչափ մրցակիցներուն համեստութեան որչափ որոշեալ նիւթին վրայ գրելու դժուարին պայմանին՝ ինչ որ սատարած է գոնէ աստիճան մը զսպել ու սանձել իրենց եռանդը:

Թէեւ հաճոյալի ժամանց մ'եղաւ ինծի ընթերցումը այդ գունագեղ քերթուածներուն, բայց ինծի տրուած պաշտօնը խոճի մտք կարենալ կատարելու համար, համբերտաւոր ոգով պարտաւորեցայ կրկին և կրկին կարդալ, մահաւանդ այն կարգ մը քերթուածները, գրուած այնպիսի մանուածապատ ոճով որ ճիշդ մ'ընել անհրաժեշտ է թափանցելու համար իմաստին, յաճախ բացակայ: Յետոյ՝ ոճին, բացատրութեան և գեղակերպին զանազանութեան հետ, գեղագրութեան

պէտպնութիւնն ալ ուշադրաւ խնդիր մ'է. դեռավարժներ կան որ բնաւ այդ ճաշակը չունին և թուղթ կը մրտեն անհեթեթ ու անխնամ գրութեամբ ու հարկ կ'ըլլայ ընթերցումը ստէպ ընդհատել, բաղդատել ու լուծել հանելուկի պէս:

Իսկ գաղափարներու արտայայտութիւնը, բանաստեղծական ներշնչումը, նկարագրական ոճը ու ձեւը, և լեզուի ներդաշնակութիւնը այդ քերթուածներուն, քննիչին հետաքրքրական ուսումնասիրութեան նիւթ կը հայթայթեն, ուր կարելի է քիչ մ'ալ հոգեբանութիւն խառնել:

Ա. փոստ որ թէրդեան էֆ. սիրելի բարեկամին աչքին հիւանդութիւնը դեռ ժամանակ մը դարմանի կարօտ ըլլալով, արդիւում է իրեն գրել ու կարդալ. Փանոսեան էֆ. և ես՝ յօժարակամ ընթերցողի դերը կատարեցինք իրեն մօտ. առանց այս դժբաղդ պարագային՝ ինքը պիտի կրնար աւելի ձեռնահասօրէն պարզել իր գնահատումները այս նիւթին վրայ: Առթիւ որ կը ներկայանայ, չառ գեղեցիկ է նաեւ Փանոսեան էֆ. ի սրբամիտ պաշտօնակցին գրիչին համար, եթէ յօժարէր, ինչպէս ուրիշ անգամ, գլուարթօրէն արձանագրել իր տպաւորութիւնները:

Լնտրութիւնը արդէն կատարուած է երեք քննիչներնու համաձայնութեամբ: Ծիածան\*\*\* ծածկանունը ոտանաւորին հեղինակը կը շահի առաջին մրցանակը, ոչ իբրեւ անթերի երկ՝ այլ իբրեւ սրտաբուխ քերթուած մը ընդհանուր ձեւին մէջ յաջողած որ մեղամաղձիկ բոյր և անկեղծ շեշտ մ'ունի: Բ. մրցանակը կը ստանայ Ասորա ծածկանունը քերթուածին հեղինակը որ իր մրցակիցներուն ծեծած արահետէն կը շեղի. ապաշխարող մ'է ան, գուցէ կեանքին սրդսղած՝ որ զղջումով, պաղատանքով ու սրտառուչ շեշտերով Աստուծոյ կը նուիրէ իր սիրտը, միացող խունկին ու մոմին պէս: Գ. Մրցանակը արուած է Աեռել ծածկանունը քերթուածին. խնամեալ, սահուն ոճ, ներդաշնակ տաղաչափութիւն, ուր սակայն բնութեան նկարագրութիւններ կան, յաճախ կրկնուած ու ծեծուած: Ասոնցմէ զատ Դ. և Ե. մրցանակներուն արժանի համարուեցան Վիօլա Ե'Ամօռէ և միւս Ծիածան ծածկանունը քերթուածներուն հեղինակները, որոնց առաջինը շողշողուն բառերու, աղուոր բացատրութեանց հետ՝ սեթեւեթեալ ոճ մ'ունի, իսկ վերջինին մէկ երկու տունները սիրուն, միւսները տկար են:

Մնացածներուն մէջ կը գտնուին քանի-ներ որք կը պարունակեն քնքուշ ու տրտում կամ կրքոտ ու կրակոտ տողեր, բայց ամբողջութիւնը յանձնարարելի չէ. կան նաև որ սիրուն գաղափարներ կը ցոլացնեն, բայց չեն յաջողած գոյար ոճով բացայայտել ու հագուեցնել: Այս կարգէն ըլլալով՝ հետեւեալ ծածկանունը քերթուածներուն հեղինակները մասնաւոր յիշատակութեան և բարենիշի արժանի են. Արծիւ, Հիրիկ, Մանուշակ, Գլակ—Հինկոյ, Լեւակ, Զատիկ, Տափնէ, Շաթքաս, Մելօտի, Տիլֆրիպ, Բրիւրատ, Բէմբէ:

Զգացումի արտայայտութիւնները կեղծ ու բռնազբօսիկ կ'ըլլան երբ սիրտը ճշմարտապէս բարախած չէ, ու նախապէս տրուած նիւթին վրայ գրելու պարագան ալ կաշկանդած է անշուշտ մրցակիցներուն միտքը՝ զուրկ ներշնչութիւն ձրքէն, և արգահատելով կ'ընտելէ խել մը արտադրութիւններ խակ ու ցա-

մաք՝ տափակութեան գլուխ-գործոցներ են: Մերժուածները հիմա պիտի խորհին թէ արժանապէս զննատուած չեն ու անողոր պիտի գտնեն քննիչին վճիռը իրենց նկատմամբ: Այս խորհրդածութենէս մղուած կը հարցնեմ թէ մրցումը որքան քաջակերի՝ նոյնքան վիրաւորիչ ու ավուր դեր մը չէ՞ որ կը կատարէ: Ամէն ծաղիկ՝ իր ստուերն ունի, մրցումն ալ որ սահմանուած է երեւան հանել և խրախուսել լաւագոյն զրոյնները, յաճախ շփաշղնելով ընտրուածները, կը ձգտի նաեւ գրգռել փառասիրութիւնը ու զայրոյթը մերժուածներուն, եւ այս վերջիններէն քիչերը, ու թերեւս ամէնէն զգայունները ջլատին ու քաշուին ասպարէզէն որ կրնար իրենցը ըլլալ, իսկ ընդհակառակն շատերը՝ անվճատ ու նոր թափով պիտի յամառին մաքառիլ միշտ յովողելու ասպարէին ջանքով ու չի պիտի զգան երբեք իրենց անհարակութիւնը:

Այս նորոնծայ հեղինակները, նոր լեզու ելած շաղկրատող ձայուներ, ամէնքն ալ իրական կամ երեւակայական սիրունի մ'ունենալ կը թուին, որ գրեթէ միշտ հրաշաքեղ, անզուգական ձրքերով օժտուած է. ու կը նկարագրեն իրենց առաջին սէրը եւ թերային, անսպառ. իրենց վայելած նախկին հոճուանքը՝ երանութիւնը. ու յետոյ յանկարծ՝ անխուսափելի բաժանումը մահաւամբ կամ պանդխտութեամբ, ու հոս ծայր կուտայ արտայայտութիւնը ցաւի, կսկիծի, ողբի ու կոծի. ոմանք համակերպած կը հալին ու կը մաշին. ուրիշներ կը կուրին, կը սպառնան ու կ'անիծեն: Յանցաւ բացառութեամբ, ա'յս է իրենց հնարքներուն, յղացումներուն յուղիչ կիճիւրը ու զրուազը: Կը զարմանամ որ ոչ մէկուն մտքէն անցած է մօր մը դաւակէն, քրոջ մը կողբօքն զատուած ըլլալու պարագան. ընտանեկան ինչ սրտաշարժ պատկերներ զձեզ կարելի է, երբ հարազատներ տարիներով իրարու երես տեսած չեն, իրարու ձայնը լսած չեն ու մաշող կարօտով՝ լռիկ կը տառապին: Բայց երիտասարդներ են ու կը ներեմ իրենց՝ վասն զի նիւթը աւելի հրապուրիչ է սիրահար սիրտերու համար:

Անշուշտ կերեւակայէք թէ այս քեր-

թուածներուն մէջ ինչ մեծ դեր ունին բնութեան ամէն տարրերը, «երկնից դշխոյ պերճ լուսնեան, գետին կարկաշտը ու առուին խոխոշը, սոխակը՝ սիրահար վարդին՝ խորշակահար, թուփը ու ծաղիկը որք զեփիւռին հետ կը պարեն»։ Բայց ասոնք հին ձեւերն են, ու ինչպէս ամէն հեղինակ իր նախասիրած բաներն ունի, այսպէս նորեկներն ալ իրենց յատուկ բառարանը ունին ուրկէ չուայօրէն կը քաղեն ու կը զարդարեն իրենց սիրերգները, երբեմն առանց պատշաճութեան, առանց ներդաշնակութեան, ու մի միայն կազմողը ամբողջացնելու կամ յանգին յարմարեցնելու համար. ահաւասիկ նմոյշներ. համբ հասնում, հրայիբ, արբեիռ, սարսուռ, խուցկ-օծում, ոսկեյեռ սնդուս, ասմազում, բուրլառ, նոնիմբու սեւ սուգ, հուրի, պարիկ, անուշեւն. եւն. այս անուրջ բառը մանաւանդ համակրութիւնը գրաւած է չառ մը նորեկներուն որ կը գործածեն զայն չարաչար։

Համակարծիք չեմ անոնց որ բանաստեղծութիւնը դատախիտելով կը ձաղկեն պատանիները որ հաճոյք կ'ըզգան ոտանաւոր սողելէ իրբեւ անմեղ ժամանց. կ'ախորժիմ կարդալ իրենց քերթութեանը՝ բաւական է որ հասկնալի ոճով ու սրտով գրուած ըլլան։ Սակայն ի բաց առնելով մէկ քանի կարող ու կայտառ գրիչներ որք արդէն բաւական համբաւ մը չինած են, դիտելի է որ պարբերական Հանդէսներու մէջ մերթ ընդ մերթ հիւրընկալուած սիրերգները՝ իմաստի ու զգացումի աղքատութիւնը կը ծածկեն, զարճարծիկ ոճով ու չլացուցիչ բառերու կուտակումով. այս տեսակ թրթռուն բանաստեղծութեանց մէջ կը պահանջուի որ վերջին տունը, մանաւանդ վերջին տողը պարունակէ գեղեցիկ գաղափարի անակնկալ ցայտումը, յուզիչ տպաւորութիւն մը ներգործելով. նորեկներուն քով այս յատկութիւնը կը պակսի. իրենց քերթութեանը չառ փայլուն կերպով կը սկսին ու կը վերջանան դուեհիկ հետեւութիւնով՝ յուսախար զարմանք պատճառելով ընթերցողին։

Թերութիւններ մասնաւոր ընելով՝ նստալ տակ չունիմ վիրաւորել ու վհատեցնել նորաւարները. ընդ հակառակն, յորդորել կու-

ղեմ զիրենք որ ուսումնասիրեն մեր եւ տար գրականութեանց ընտիր հեղինակները՝ կրթելու համար իրենց ճաշակը և ազնուացնելու, զարգացնելու համար իրենց գաղափարները. ճշմարիտ տաղանդն է միայն որ առաջնորդուելու պէտք չունի, ան ինքնին կը հարթէ իր ուղին։

Նգրակացութիւնս այն է թէ մրցակիցներուն մէջ՝ թէեւ տաք զգացումով մէկ երկու համով գրողներ երեւան ելան, բայց սրտի դպլոզ ու խակատիպ գրիչի մը չի պատանեցայ՝ նորածիլ քերթող մը յատկանշող. թերեւս սխալիմ ու թերեւս տաղանդի բոյներ պահուրտած ըլլան այդ թարմ ու մանկական յանգերուն տակ որ շողի ու շնորհի մը կը սպասեն ճառագայթելու համար։

Մ. ԱՃԵՏԵԱՆ

## ՅԻՇԱՏԱԿ ՄԸ

Արեւելեան Մամուլի Մայիս 10ի թիւին մէջ Տիկին Լուսի Գասպարեան՝ Սիպիլի ծածկ հարցման պատասխանելով յօդուած մը հրատարակած է որ ուշադրութիւն դրաւելու արժանի է։ Տիկին Լուսի Գասպարեան չառ աղնիւ զգացումներով սողորուած կ'երեւայ՝ երբ կ'ըսէ թէ կիները իրենց այրերուն քով փնտռելու են սա երեք գլխաւոր յատկութիւնները. «Սիրտ, խելք և գործունէութիւն»։ Սրտի մասին կ'ակնարկէ թէ սիրող ըլլալու է, տաք այլ ոչ սիրալառ, սէր մը անուշ, հանդարտ, անհուն և մշտատեւ, առանց կրքի և չափաւանց կրակոտ զգացումներու։ Սէրը, ըստ իս, կարգ կանոնի տակ չկրնար մտնել սակայն. բնածին է, կոյր է ստէպ։ Անշուշտ Տիկին Լուսի Գասպարեան ամուսնութիւնէ յետոյ ամուսիններու մէջ ծնունդ առնող համակրութիւնը և փոխադարձ յարգանքը ըսել կ'ուզէ։ Խելքի մասին կը համաձայնիմ բոլորովին Տիկին Լուսի Գասպարեանի, այսինքն այր մը պէտք է ըլլայ աւելի խելացի քան կինը, ուսեանայ բարձր միտք, ըլլայ զարգացած և լաւ դատող, որ հեղինակութիւն ունենայ իր կնոջ վրայ։

«խելացի ամուսնոյն մէկ գորովալի ալ նարկը միայն բաւական է, կ'ըսէ Տիկին Գասպարեան, նախապէս ապահովելու կինը բարոյական անկումներէ» :

Բայց երբեք չպիտի կրնամ համաձայնիլ իրեն հետ սա կէտին վրայ թէ կինը որքան խելացի, զարգացած ու կատարեալ ըլլայ՝ սխալելու աւելի հակամէտ է քան թէ այրը : Ըստ իս, կինը, մանաւանդ աղնիւ և բարեկիրթ ընտանիքի պատկանող կինը, ամօթխածութեան զգացում մը ունի որ զինքը աւելի քիչ չեղել կ'ուտայ քան թէ այրը : Կինը ունի նաեւ այրէն չատ աւելի ընկերային և ընտանեկան ծանր պարտաւորութիւններ, նըկատելով որ կնոջ սխալը կամ չեղումը անդարմանելի վնասներ և պատուհասներ կրնայ առաջ բերել քան թէ այրին սխալը կամ չեղումը :

Տիկին Գասպարեան կը պահանջէ նաեւ որ այր մը ըլլայ գործունեայ և դրամ չահելու կարող : Այրը թո՛ղ ըլլայ գործունեայ, կ'ընդունիմ, և այր մը որ գործունեայ չէ, ըստ իս մարդ ալ չէ, ըստ որում չկայ բան մը որ աւելի կազդուրիչ, բարոյացուցիչ, աղնուացուցիչ ըլլայ մարդուս համար քան թէ գործունէութիւնը և աշխատութիւնը : Բայց այդ յատկութիւնը միայն ամուսնութեան մէջ չըլնուող իր : ամէն մարդ, այր կամ կին, ամուսնացեալ կամ ամուրի, մեծ կամ փոքր, բնութեան օրինակին հետեւելով շարունակ աշխատելու պարտաւոր է : Բնութեան մէջ բան մը չկատիր : Ծառերը, բոյսերը, կենդանիները, ծովու ալիքները, նոյն իսկ ժայռերը կ'աշխատին : Սոխակը կ'աշխատի իր դայլայլիկովը, վարդը կ'աշխատի բլթեկովը, ծովուն յատակը ժայռերու վրայ բռնաոր կ'աշխատի աճումովը :

Միայն թո՛ղ ներկի ըլլայ ինձ ակնարկել թէ «դրամ չահելու կարող» պարբերութիւնը չեմ կրնար հասկընալ երբ հետեւեալ, խօսքերով կ'ուղէ բացառել զայն Տիկին Գասպարեան, «—Այրը որքան խելացի, արի, աշխոյժ և գեղադէմ ըլլայ, որքան սիրէ ու պաշտէ կինը, դարձեալ նա դժբաղդ կը զգայ ինքզինքը՝ երբ իր ամուսինը աղքատ է և չկըր-

նար գոհացնել իր փափաքները» : «Դրանմէ, կը յաւելու Տիկին Գասպարեան, որ զուարթ կ'ընէ կինը : Ընտիր գրքերը, դաշնակը, զրօսալի պոռոյաները, թատրոնը, նուագահանդէսը, պարահանդէսը, ուղեւորութիւնը այնքան ձգողական հրապոյր մը ունին դարգացած և գեղեցկագէտ կնոջ համար որ առնցմէ գոնէ մէկ քանին չկրնալ վայելիլ ճշմարիտ զրկանք մը կը համարի միշտ» :

Չմոռնանք որ Տիկին Գասպարեան մէկ կողմէ ամուսնական բարօրութիւնը սիրող վրայ և սէրն ալ փոխադարձ հասկացողութեան, վստահութեան, անձնուիրութեան և գոհութեան վրայ հիմնած էր, աւելցնելով թէ խելացի ամուսնոյն մէկ գորովալի ակնարկը միայն բաւական է նախապէս ապահովելու այդպիսի անկումներէ : Արդ, մեծ հակասութեան մէջ կ'իյնայ ըսելով թէ դրամն է որ զուարթ կ'ընէ կինը և թէ դրամին տուած վայելքներու չ'արժանանալը ճշմարիտ զրկանք մը կը համարի :

Ուրեմն ճշմարիտ զուարթութիւնը և երանութիւնը սիրող մէջ չեն, ուրեմն ամուսնոյն միւս բարի յատկութիւնները կարեւորութիւն չունին, ուրեմն ամէն ինչ դրամէն սպասելու է :

Շատ լաւ, բայց երբ ձեր դուստրը հարուստ մէկու մը հետ կ'ամուսնացընէք և ամուսնութենէ ժամանակ մը յետոյ բաղդին բերմամբ կամ անխուսափելի պարագաներով այդ ամուսինը հարստութիւնը կը կորսնցնէ, այն ատեն ամէն բան լմնցա՞ւ, ուրեմն այն ատեն զրկանք, դժբաղդութիւն, յուսահատութիւն, անձնապահուութիւն և զաւակաց համար մշտապէս թշուառութիւն, այնպէս չէ : Արդեօք ա՞յս է ամուսնութեան նպատակը և կոչումը :

Այս մասին թո՛ղ ներկի ըլլայ ինձ ոչ միայն չհամաձայնիլ Տիկին Գասպարեանի կարծիքին, այլ բոլորովին հակառակը մտածել և պնդել :

—Ի՞նչ է ամուսնութեան նպատակը :

—Էրկամարդուն և կնոջ միութիւնն է՝ մարդկային ցեղի մշտապահութեան համար : Այդ և կին պարտաւոր են իրարու օգնել և այդ իրարօգնութեամբ կեանքի ծանր բեռը վեր-

ցընել և փոխադարձ ցաւերու և ուրախութեանց մասնակցիլ : Այս պէտք է ըլլայ երկուքին հաւասար ճակատադիրը, զի եղիցիմ երկոքեան ի մարմին մի :

Մարդկային ցեղի մշտառեւութիւնը տըղոցմով կ'ըլլայ : Հետեւաբար ընտանիքի մէջ տիրող գլխաւոր շահը՝ մանկան շահն է և գլխաւոր երջանկութիւնը՝ մանկան երջանկութիւնն է : Այսպէս կը տրամադրեն Աստուածային, մարդկային և ընկերային օրէնքները :

Տիկին Գասպարեան դրամ ըսելով պարզ գոյութեան յատուկ պիտանի դրամը չուզեր հասկնալ : Արդէն մարդս ամէն վիճակի մէջ այդ դրամին պէտք ունի և այդ դրամին վրայ խօսելը պարապ տեղը խօսիլ է, այլ կ'ուզէ ըսել բարեկեցութեան և արդուզարդի յատուկ դրամը, այսինքն հարստութիւն որ ապահովէ կնոջ վայելուչ հագուստներ, դաշնակ, զբօսալի պտոյտներ, թատրոն, նուազահանդէս, պարահանդէս, ուղեւորութիւններ ևւն : :

Հեռի ինձմէ մարդկային սերունդը այդպիսի առաւելութիւններէ դուրկ տեսնելու բաղձանքը : Ընդհակառակը երբ իմ նմաններուս, այսինքն ամէն դասակարգի մարդերու այգպիսի վայելքներէ զրկուիլը կը դիտեմ՝ ես ինքս ալ կը տրտմիմ, բայց բուն առաքինութիւնը կը կայանայ անդորրութիւն և բարօրութիւն գտնելուն մէջ՝ այդ վայելքներէն զրկուած ըլլալով իսկ . այն ալ կ'ըլլայ ընտանեաց և մանաւանդ զաւակաց հանդէպ մեր պարտաւորութիւնները լիովի և խղճի մտօք կատարելով, որմէ աւելի մեծ և ճշմարիտ վայելք եւ երանութիւն չեմ կրնար մակարերել :

Չկայ հարստութիւն մը որ կարող ըլլայ ինքնին այդ վայելքը և երանութիւնը տալու :

Երբ այլ մը իր նիւթական հարստութիւնը և առողջութիւնը կը կորսնցընէ՝ ճիշտ այն ատեն է որ կը սկսի կնոջ գլխաւոր դերը, առաքինութիւնը, նուիրական և հրեշտակային պարտաւորութիւնը որ է սիրովել, միսթարել և քաջալերել զանիկա որ կարող ըլլայ այս անգամ ալ կենաց բեռը, որ ծանա-

րագոյն եղած է, տանելու ըստ կարելոյն և ցոյց տալ անոր կարեւոր խնայողութիւններ, բայց առանց որ եւ է կերպով անոր ինքնասիրութիւնը վերաւորելու :

Երբ դժբաղդ պարագաներ զմեզ կը զըրկեն մեր հարստութիւնէն, պարտաւոր ենք ապրելու կարելիութիւն մը, ձեւ մը փնտել որ մեր սահմանափակ վիճակին համաձայնի :

Թո՛ղ ներէ Տիկին Գասպարեան որ օրինակ մը տամ հոստեղ :


Պատանեկութեանս ատեն կը յիշեմ թարգմանած և հրատարակած ըլլալ Արեւոյտի մէջ Ամերիկացի բանաստեղծի մը մէկ գեղեցիկ հատուածը :—Նիւ-Եօրք հաստատուած բաղմահարուստ սեղանաւոր մը, որ երկու զաւկի տէր էր, բաղդի հարուածներէն կ'աղքատանայ և կը հարկադրուի զրկուիլ իր ապարանքէն, կահ կարասիէն, կուքերէ, ձիերէ, ճոխութիւններէ և երթալ վարձել քաղքէն դուռս խրճիթ մը, որպէս զի իր տարաբաղդ ընտանիքը հոն պատասպարէ : Իր օրական սլաքէնը հայթայթելու համար կը ստիպուի մանր մունր միջնորդութեամբ զբաղիլ : Երբ առաջին անգամ, դեռ արեւը մարը չէր մտած, ինքը արդէն յոգնած քայլերով կը հեռանար քաղաքէն և կ'երթար իր տնակը՝ ընտանիքին քով դառն դիշեր մը անցընելու . յանկարծ կը տեսնէ իր կիներ իր զաւակներովը խրճիթին մօտ, ծաւերու տակ դալարագեղ մարգագետինի մը վրայ սփռոցի մը վրայ դրուած հաց, պանիր և կարմիր ու թարմ կեռասներ զորս հաւաքած էին : Նախկին միլիոնատէրին ճաշը ասոնցմէ կը բաղկանար : Կինը և զաւակները դուրգութիւնքով կ'ընդունէին զինքը . իր դժբաղդութիւնը կը մոռնայ անոնց ժպիտներուն մէջ և գուցէ այդ պահուն աւելի երջանիկ կը զգայ ինքզինքը իր հարստութեան ժամանակէն . . . :

Իգգիւ

ԳԻՈՐԳ ՊՈՒՊԻ

ԳԱՄԻՐԻ ՎԱՅԵԿԵՆԱԿԱՆԸ ԵՒ ՏԻԿԻՆ ԶԱՊԷԼ ԵՄԱՅԵԱՆԻ ԱԽՏԱՆՈՐ ԲՈՂԻՆԵՐ ՀԱՐԿԱՂՐՈՒՆԵՅԱՆՔ յաջորդ թիւին յետաձգել, Մասիսի ներկայ համարի յօդուածներուն ընդարձակութեանը պատճառաւ :

# ՔԱԾՆՈՒԱԾ ՍԽՏԵՐ



## Բ. ՄՐՑՕՆԱԿ.

Բաժնուժ սրժիս կոժժանոյ համակ  
 Է որ Քեզ կու գամ, սերերու Ասուժ .  
 Հեւերու սեղ՝ բոցն է սիրոյս հիմակ  
 Որ կը պըլըլի աճունիդ սիրուժ :  
 Խեղճուկ մոլորեալ ճաւորդ մըն եմ ես,  
 Ծովու զայրուցքին հըլու հըպասակ  
 Մըրքիկներ ուժգին խըւեն զիս պէս պէս .  
 Տեղ մը տո՛ւր ինձի, պաշտպան քելիդ տակ :

Ներէ՛, Տեր, ներէ, ներէ՛ որ ապրիմ . . . :

Սրժիս չանալով ըրի ամէն բան .  
 Լըքեցի Քեզ, Տեր, ամաւրիւս եղայ .  
 Քու շողերդ հուսկ իմ վըրաս եկան,  
 Յաւի բեռին տակ յոգնաժ եմ հիմայ :  
 Դարձո՛ւր զիս, Ասուժ, դարձո՛ւր մեղքէն զիս  
 Եւ բուժէ զիս այս՝ տագնապէս անհուն,  
 Ծաղկի մը նըման բացի ես հոգիս  
 Դըքուքեան անոյժ ցոյ շընորհներուն .

Ներէ՛, Տեր, ներէ, ներէ՛ որ ապրիմ . . .

Պաշկերիդ առջեւ հիմայ դալտոքն  
 Կուլամ զըղջացաժ . . . արցունքներս սակայն  
 Կընդունի՞ս, Յիսուս, ալ չե՛մ անտէն,  
 Կը փարիմ Քեզի, հաւատքով մը լայն .  
 Կ'օգտէ, ա՛լ հերիք մեղքի մեջ թաքաւ  
 Մընացի ես, Տեր . ո՛հ, զիս մեղքըքի,  
 Թող՝ տուր ինձ որ ալ խաբկանքէս տակաւ  
 Թօլըլիմ, զքեզ՝ պաշտեմ անձանձիւ :

Ներէ, Տեր, ներէ, ներէ՛ որ ապրիմ . . . :

Հեւացաժ սրժիս Քեզ մօտիկցուցաժ, —  
 Քաղցր է ապաքէն այս սուրբ մերձեցում, —  
 Կը զգամ, քէ ըզՔեզ կը սիրեմ, Ասուժ,  
 Խանդով քան երբեք, անձիւ անհատում :  
 Թո՛ղ որ մոմ ըլլամ պաշկերիդ առաջ,  
 Ու սրժիս անոր բոցն ըլլայ մեջի .  
 Ընդունէ իմ այս լալիքս ու հաւաչ,  
 Հաւատք, յոյս եւ սեր կը բերեմ Քեզի :

Ներէ, Տեր, ներէ, ներէ՛ որ ապրիմ . . . :

Թո՛ղ որ խունկն ըլլամ Քու սուրբ բուրվառին,  
 Վիքաւոր հոգիս կնդրուկ ըլլայ թող .  
 Ըզգացումներս առդ Քեզմով կը վառիմ,  
 Հեւացուր ինձմէ, հա՛յր, խոհեա խանդող . . .  
 Եւ որպէսզի պինդ ըլլայ ուխտս, ո՛ր Տեր,  
 Տա՛մ արցունքս ըլլայ թո՛ղ սիրոյդ նըւեր . . . :

# ՇԱՏՈՒՆ

## (ՆՈՐԱՎԷՊ)

Վերարկուն տունը մուցած պատմութիւն մը պիտի պատմեմ հոս, որ սակայն հեռու է մերկ ըլլալէ: Թեթեւ հագուած պըրուէինք-րու նման ներքին հագուած ու կապուածի խոստմնալից սեթեւեթներով կը ներկայանայ անկա և վստահ եմ թէ մասնաւոր համակ-րանքով պիտի կարգացուի բարոյականի բոլոր խտապահանջներուն կողմէ, որոնք առանձ-նութեան մէջ պինդ կը գնահատեն «վրան բաց» բաները, պայմանով որ ուրիշներուն ներկայութեանը կշտամբեն զանոնք:

Իէպէր շատ նոր չէ, առանց բոլորովին հին ըլլալու: Զգացումներու յաւիտենական բաղմայօգութեանը մէջ նոր ապոցոյցն է ա-նիկա, որ կրնայ նաև իբր փաստ մը ներկա-յացուիլ սիրոյ՝ ամէն նկատումէ գեր ի վեր՝ ամենակարողութեանը: Մեքենականութեան այս դարուն մէջ, ուր սրտին տրոփիւնները ժամացոյցի մը ճոճանակին կանոնաւորու-թիւնը ունենալու կը հրաւիրուին, այս դէպ-քը մէկն է այն զօրաւոր հերքումներէն, ո-րոնք կուգան ապացուցանել թէ որքան ա-պարդիւն են մտքին բջիջները գիտուն կա-պիկներու նման մարդելու ձգտող ջանքերը...

Իժուարութիւն չպիտի կրեմ ձեզի ներկա-յացնելու Միհրդատ Ընկոյզեանը, դէպքին հերոսը, որ ժամանակակից պատմութեան մէջ մուցուած պիտի անցնէր, եթէ իր կենսագիրը ըլլալու պատիւը չփափաքէի աւելցնել փա-ռաց պսակին, զոր մեր չնաշխարհիկ զրակա-նութեանը մէջ անուանս շուրջը բոլորած ըլ-լալս համեստաբար կը խոստովանիմ: Իր դէմ-քը դիտելով՝ մարդ սա համոզումը կ'ունենայ թէ մայր-քնութեան խոր քունի թաղուած ասոնը ծնած ըլլալու է, որովհետեւ աշխարհ եկած ատենը բոլորովին մուցած է մէկտեղ բերել իր բաժինը այն չնորհներէն, որոնք համակրելի կ'ընծայեն մարդը... Նոյն իսկ երբ իր ցեղին տգեղ կիսուն կը պատկանի: Գա-լով ինկքի ձիրքերուն՝ անանկ Ղաղարոսէն

չատմեմ տարբերութիւն չունէր նաև այս տեսակետով, ինչ որ պիտի կարենար իր եր-ջանկութիւնը ապահովել, եթէ հաւատարա-պէս անանկ մը ըլլար նաև տենչանքի կողմէ, որ կատարեալ չարչարանքի մը ձեւը կ'առնէ՝ փափաքին հասնելու կարողութենէն կամ մի-ջոցներէն զուրկ եղողներու կողմէ արտայայ-տուած ատենը:

Միակ պարագան ուր զրկումէ շատ հեռու վիճակի մը արժանացած էր այս համբաւաւոր Միհրդատ Ընկոյզեանը, աշխարհային ունե-ւորութիւնն էր: Լիւրժի ունէր մամոնան, ո-րուն վրայ այնքան ատելութիւնով կը խօսին կնքուղաւորները՝ առանց ըսածնուն իրենք հաւատալու: Մահտեսի Կիրակոս Ընկոյզեան՝ Միհրդատի երջանկայիշատակ հայրը՝ չէր եղած այն կարգ մը հայրերէն որոնք ինքզինքնին տարիներով հարուստ ցուցնելէ ետքը՝ լաւա-գոյն աշխարհ մը կը չունեն, երբեմն առանց նոյնիսկ իրենց թաղումին ծախքերը մաքրե-լու փափկանկատութիւնը ունենալու: Ընդ-հակառակը, շատ մը ի խորոց սրտի հոգւոց-ներու իրաւունք չահած էր իր ձգած հաղա-րանքովը, որոնք ազնուական մեծազղի կոյտեր էին, և ոչ թէ եղանակին մաւղւնները: Այս հարստութիւնը՝ որ բարեփշտատակ Մահտեսի Կիրակոսին մահուանը օրն իսկ լրագիրներու մէջ մեծապատուութիւնէ ազնուաշուքութեան բարձրացուց մեր Միհրդատ բարեկամին տիտ-ղոսը, իրեն տեղ մը չինեց նաև այն սրահ-ներուն մէջ, ուր աշխարհիս սին բարիքները ունեցողները կ'ընդունուին՝ թղթախաղի մէջ ստակնին առնուելու, կամ տան աղջիկներէն մէկը իրենց տրուելու համար:

Ու վարպետորդի Միհրդատը կ'օգտուէր այս վիճակէն, միշտ զինքը հրաւիրողներուն ստակը շահելով թղթի մէջ, մինչդեռ՝ միւս կողմէ՝ երկարատեւ սպասողականի մը տաղ-աղկութիւնով կը յուսահատեցնէր «տիկին Ընկոյզեան» տիտղոսին թեկնածու օրիորդներն ու անոնց մամանները...

Խաղի մէջ երջանիկ եղողները՝ սրտի գոր-ծերու մէջ դժբաղդութեան կը դատապարտէ Ֆրանսական սուածը, որ չիտակ պիտի ըլլար

Միհրդատի պարագային մէջ ալ, եթէ իր ան-  
գոյն աչքերը, իր դիմագծութեան անհամե-  
մատութիւնները և իր չոփ չոր հասակին տը-  
գեղութիւնը չբացատրէին իրեն, ուղղուած  
ժպիտներուն մէջ զգացումի պակասը:

Զատածին փափաքելու լենաղբական ճղ-  
տումը իր զօրաւոր, ներդործութիւնը ունեցե-  
ր Միհրդատի վրայ: Իր սրտին ամբողջ տեն-  
ջանքը, իր հոգեւոյն ամբողջ երազը՝ անձին  
համար սիրուիլն էր. իր հեշտասէրի թանձր  
չրթունքը մասնաւոր դող մը կ'արտայայտէին,  
երբ՝ ամուրիներու խօսակցութեան մը մէջ՝  
երիտասարդի մը աղջիկ փախցնելը կա-  
լքուած կնկան մը գայթակղութիւն հանելը  
կը լսէր: Սիրոյ բուռն արտայայտութիւնները  
միեւնոյն ազդեցութիւնը ունէին իր զրկուած-  
ի երեւակայութեանը վրայ ինչ ազդեցու-  
թիւն որ ունին սեղանաւորներու ապակե-  
փակին մէջի ոսկիի կոյտերը անկուտիի մը  
վրայ, որ կամուրջէն անցնելու համար տաս-  
նոց մը կը վնասէ:

Եւ յետոյ, մասնաւոր փափաք մը ունէր  
սէրը ճանչնալու անանի ձեւի մը մէջ, որ  
մինչեւ իսկ երկրորդ ապագրութիւն մը չը-  
լար: Իր սիրային յարաբերութիւնները  
վարձուած զգեստներ հագնելու նմաներ  
էին, որոնք անպատճառ անդամներով դոր-  
ծածուած են՝ որքան ալ նոր երեւան:  
Հիմա կը փափաքէր սէրը հեղինակել. իբր իւ-  
զոթը արտադրել զայն:

Ու եղաւ որ, — (ինչպէս պիտի ըսէին Աւե-  
սաբերի խմբադիրները), — Պ. Յակոբ Քաչեմձի,  
մէկը այն վաճառականներէն, որոնք երբեք  
գոյութիւն չունեցած դրամագլուխի մը չա-  
հովը ապրելու մեծ գիտութիւնը իր մշակէն,  
օր մը պատիւ համարեց իր տունը հրաւիրել  
Միհրդատ Բնկոյղեանը, որուն երկու հարիւր  
օսկինոց պօնո մը կոտորել տալու յոյսը կը  
մնուցանէր իր սրտին խորերը:

Յակոբ Քաչեմձի իր վաճառականական  
վարպետորդութիւններէն զատ՝ նշանաւոր  
էր նաեւ գեղեցիկ Աղնիւով, իր եղբօրաղջիկը  
որ հօրը մահուանէն ի վեր Քաչեմձիի տանը  
դիտաւոր զարդը կը կապէր: Արդի լուսա-  
միտ համարումներուն անկեղծ յարող մը՝

Յակոբ Քաչեմձի՝ շատ լաւ գիտէր թէ միայն  
ստակը չէ որ դրամագլուխ մը կրնայ համար-  
ուիլ: Մասնաւոր ճարպիկութիւններ ունէր՝  
աւելի կամ նուազ բարոյական ոյժերէ օգ-  
տուելու մէջ. ու ինչ բան աւելի մեծ ոյժ մը  
կրնար ըլլալ քան Աղնիւի սատանորգի չա-  
միչ աչքերը, իր երկայն արուհանուն քին նի-  
զակներուն ետին պահուած՝ որոնք չարա-  
ճըձի դիմագծութեան մը օժանդակութեամբը  
ցանկութեան մագնիսացումներ կը թափէին  
իրենց շուրջը՝ սիրտեր բռնկցնելու համար:

Աւելցուցէք որ ամենէն զմայելի հասակն  
ու անհանդարտ այժեամի դիւրաշարժութիւն  
ները ունեցող այս աղուոր աղջիկը իր ձիւ-  
քերուն կը միացնէր սրամիտ խօսակցութիւն  
մը՝ որ կարող էր ամենէն անհիթեթ բաները  
իբր պատգամ ընդունիլ տալ կուրծքին տակը  
փառքէ տարբեր բան մը ունեցող էրիկ մար-  
դու:

\* \* \*

Գրաւ կը դնեմ թէ ինձմէ վրան բաց նը-  
կարագրութիւն մը կը սպասէք հիմա, Lou-  
nethի կամ Casanovaի արժանի էջ մը, ինչ  
որ հաճոյք մը պիտի համարէի դրկ՝ եթէ  
անոնց գրչին ճկունութիւնը և նկարագրու-  
թեան գունագեղութիւնը ունենայի:

Երբ նորավէպի մը ընթացքին մէջ Միհրդ-  
դատ Բնկոյղեանի պէս սիրոյ առաջին սպաղ-  
րութիւն մը վնասող մէկը, որ եւ է Քաչեմ-  
ձիի մը քաջալերութիւններովը, Աղնիւի նը-  
ման չարածձի աղջկան մը կը հանդպի, բա-  
րեմիտ ընթերցողը միշտ կը խորասուզի շատ  
մը ենթադրութիւններու մէջ, որոնց վրայ  
խորհիլը կը խոստովանիմ թէ գեղեցիկ սլա-  
կերներու յաջորդութիւն մը կը ներկայացնէ  
մտքին առջեւ:

Սակայն առողջ սկզբունքները, որոնց կը  
կրթնի իմ բարոյականս, չպիտի ներեն որ ա-  
մենէն պղտիկ անխորհրդապահութիւնը ընեմ  
բոլոր այն սլարագաներուն վրայ՝ որոնց հե-  
տեւանքով մեր Բնկոյղեան բարեկամը՝ ճանչ-  
նալէն երեք շաբաթ ետքը՝ արդէն իրեն հո-  
մանոյ ըրեր էր Աղնիւի:

Զէ, բացարձակ կերպով կը մերժեմ ձեզ  
պատմել թէ ինչպէս լուսնի գիշեր մը, մինչ-

դեռ Պ. Յակոբ Բաշեմձի և իր ատկին քոյրը դէպ ի լեռը երկնցեր էին զեփիւռը չնշեւու համար (նկատեցէք որ լուսնի գիշերներուն ու զեփիւռին դերը շատ փոխուած է ժամանակակից սիրահարութեան մէջ) Միհրդատ և Աղնիւ՝ տունը առանձին մնացած՝ իրենց ժամանակը օգտակար կերպով գործածեցին քաղուածք մը ընելով քերականութենէն, ուր իբր առաջին կանոնաւոր բայ «սիրեմ» «սիրեալ»ը կը ներկայանայ աշխարհիս բոլոր լեզուներուն մէջ :

Քերականական նրբութիւններու մէջ չպիտի մտնեմ՝ ձեզի բացատրելու համար թէ այդ տիպար բայը որքան ապօրէն խոնարհում մը ունեցու այն իրիկունը՝ թէև երկու ամոլները երբեք մտքերնէն չանցուցին սխալի մը մէջ ինկած ըլլալին :

Եւ՝ մանաւանդ՝ երբեք չպիտի յիշատակեմ այն ան ու ո՛հ բացադանշութիւնները, յաւիտենական սիրոյ... ու «զքեզ կ'առնեմ»ի խոստումները, ցմահ իրարու համար ապրելու երդումները՝ որոնք փոխանակուեցան երկու սիրահարներուն մէջ սրտազեղ հեռուքներով նուիրագործուելով :

Դրչի այս տեսակ խիղախութիւններ, բարոյականի այսօրինակ սաղայեւական թուլացումներ մի՛ սպասէք ինձմէ :

Թանձր վարագոյր մը պիտի քաշեմ բոլոր այս պարագաներուն վրայ, որպէս զի որ և է պիղծ գաղափար չիգայ նսեմացել ընթերցողներուս կոյս երեւակայութիւնը, և որպէսզի ընթերցողուհիներս ինձմէ չլսեն կարգ մը անբարոյական բաներ, որոնք սակայն անբնական չեն :

Ինչ որ պատշաճութեան սահմաններուն մէջ կրնամ ըսել՝ այն կատարեալ գոհունակութիւնն ու շատ բնական հպարտութիւնն է, զոր զգաց Միհրդատ Բնկոյզեան, այս սիրական յաջողութենէն ետքը : Վերջապէս դատուեր էր մէկը որ ուզեր էր Սիթերեան ճամբորդութիւնը կատարել իրեն հետ՝ առանց քահանայի ստորագրութիւն մը կրող անցալի մը սլահանջելու . վերջապէս ինք ալ յաջողեր էր սիրային բարեբաղդութիւն մը ունենալ... անխարդախ տեսակէն :

Ձեմ կարծեր որ Մեծն Նաբոլէոն գլուխը աւելի վեր բռնած ըլլայ Իէնաի յաղթանակէն ետքը, որքան գոռոզ կեցուածք մը ունեցաւ Բնկոյզեան՝ իր այս շահատակութենէն յետոյ : Տօն-Քիշօթեան ձեւերով կը հրապարակէր իր նոր յարաբերութիւնը որուն՝ ուրիշներու բերնին ջրերը վազցնելը մանաւանդ շատ կը գգուէր իր անձնասիրութիւնը :

Ու յետոյ, անուրանալի է թէ քերականութեան քաղուածքը շատ հաճելի զբաղում մըն է ուսումնաստենջ երիտասարդի մը համար, մանաւանդ երբ Աղնիւի նման աղւորիկի մը համախոհութեամբ կը կատարուի անիկա :

\* \*

Համակրելի ընթերցողներս, որոնց անչնորհք ենթադրութիւններէ խորշելուն կասկած չունիմ, արդէն հասկցան անշուշտ թէ Միհրդատ Բնկոյզեան դժուարութիւն չըրաւ համբաւաւոր երկու հարիւր ոսկինոց պօսօն կտրելու իբր բարեկամական ծառայութիւն մը բանաստեղծական Բաշեմձիին, որուն լուսնի գիշերներու և զեփիւռին յարումը մասնաւոր համակրութեան արժանի էր արդարեւ :

Անօգուտ կը համարիմ միանգամայն օրը օրին արձանագրել իր մականունան արժանի բոլոր վարպետորդութիւնները որոնց դիմեց Բաշեմձին, այս նոր կացութիւնը շահագործելով, ինչպէս նաև ստիպումները զոր քերականութեան նշանաւոր քաղուածքին յաջորդօրէն իսկ սկսաւ ուղղել Աղնիւ իր հոմանիին, անկանոն կերպով խոնարհուած «սիրեմ»ը կանոնաւոր բայերու շարքին մէջ դասել տալու համար :

Սակայն Բնկոյզեան չէր աճապարեր հոգեբանական վայրկենի մը մէջ խոստացուած «քեզ կ'առնեմ»ը իրագործելու, ինչ որ կըրնայ արդարացուիլ՝ սիրահարութեան մէջ տեղի ունեցած երդումներուն աշխարհիս սկիզբէն ի վեր անվճարելի ասպտիկներու կարգէն համարուած ըլլալովը :

... Ու նորէն եղաւ որ օր մը Բնկոյզեանին ա'լ բոլորովին տաժանելի եկաւ այս սիրոյ լուծը, թէև ամէն կապէ աղաւթ, լոկ կամայական բան մըն էր անիկա :

Մարդկային սիրաբը այս անկայութիւնները

ունի, մանաւանդ Ընկոյզեանի մը տոմարակալութիւնով չաղախուած սիրտը :

Շատ մը հեղինակներու նման, որոնք առաջիններն են կուտ մը չտալու իրենց գործերուն, Ընկոյզեան ալ՝ առանց ուրիշի թելադրութեան՝ ինքնիրեն համոզուեր էր իր հեղինակութիւնը եղող այս սիրոյն յաւերժացուելու արժանի բան մը չըլլալուն :

Այս համոզումին յարակից, իր երեւակայութիւնը սլացեր գացեր էր դէպ ի այն բարձրութիւնները, ուր Վանտերալիտեան հարստութիւններ կը կցունէին էրիկ փնառող աղջիկներու անուանը . . . :

Այս տեսակ տրամագրութիւններ ունեցող անձի մը համար ելքի միջակ ճամբայ մը կայ, իր հոմանոյշին վիճակը կանոնաւորել փոխարինութիւն մը նուիրելով անոր, նուրբ բանակցութիւններու շնորհիւ, որոնց մէջ իր ճարտարութիւնները գործածելու նոր առիթներ ունեցաւ համբաւաւոր Քաշեմճին : Խղումը տեղի ունեցաւ առանց աղմուկի, սլարզայէս վեց հարիւր ոսկի դրուելով Քրէտի Լիօնէն Ազնիւի ապագայ զրամօթիտը կազմելու համար :

. . . Եւ Պ. Ընկոյզեան կրկու հարիւր ոսկինոց կրկնորդ Կօնօ մը դեղչեց Պ. Քաշեմճին, իրր նոր փոխարինութիւն մը՝ քերականական դասերու այս վերջաբանին մէջ մատուցած նոր ծառայութեանը :

\* \* \*

Վեց ամիս անցած է Ընկոյզեանի դատուելէն ի վեր նուշ ու անոյշ Ազնիւէն, և ազուոր աղջիկը՝ որ սլքասիրութիւնն ալ աւելցուցած է իր բնածին շնորհներուն, զեղեցկութեանը կատարելութեանը մէջ կը գտնուի հիմա սրահի մէջ ծլած վարդի մը կը նմանի անիկա, որ բաց օդին հանուածին պէս թարմութիւն կը ստանայ և կոկոնի հրապոյրներ կը սփռէ շուրջը :

Աշխարհիկ կենցաղ մը սկսած է հիմա Ազնիւ, կեանքը հասկցած աղջկան կենցաղ մը, որ ապահովագրութիւնը ամերիկեան ընկերութիւններէն աւելի տէր-պապային օրհնած սլակին մէջ կը տեսնէ :

Քրէտի Լիօնէի մէջ վեց հարիւր ոսկին

բան մըն է այս նպատակին հասնելու համար և աւելի բաներ են անշուշտ Ազնիւի աչքերն ու խոտովալից զեղուն կազմը՝ զոր հիմա կատարելապէս կ'արժեցնէ իր արդուզարդին մէջ, ինչպէս Քաշեմճեւարի խանութպանները գիտեն արժեցնել իրենց ծախելիք ապրանքները :

Ընկոյզեան փողոցը քանի մը անգամ հանդիպած է իր հին հոմանոյշին և անոր օրէ օր փթթած շնորհներուն ի տես ձգտումներ ունեցած է վերանորոգելու իր հին յարաբերութիւնները. սակայն մինչ մէկ կողմէ երկրորդ խղումի մը դժուարութիւնները՝ կասեցուցած են զինքը, միւս կողմէ՝ Ազնիւին արտայայտած կատարեալ անտարբերութիւնը սլաղ ջուրի douche-ի տեղացուցած է իր փրկադէզ զգացումներուն վրայ :

Սիրեմ բային անկանոն խոնարհումներուն այս վերջուշումները հետաքրքրաշարժ հոգեբանութիւն մը ունին. մարդ կը զզջայ ձեռքին տակը գտնուած մէկ հարստութիւնը չդնահատած ըլլալուն, և սակայն այդ գտնձին նորէն դպչելու հետեւանքները կը կասեցնեն զինքը . . . Եւ մանաւանդ ունայնամտութիւնը կայ որ միշտ մեր ականջին կը փախայ «ես չուղեցի, երբ ուղեմ նէ խմ է նորէն» :

Ըսենք սակայն թէ ուղած տեսնը նորէն իրը ըլլալուն յաւակնութիւնը ինքնախաբութիւն մըն էր Ընկոյզեանի կողմէ, որովհետեւ Ազնիւ՝ իր առաջին փորձառութենէն ետքը՝ կատարելապէս որոշած էր մէյ մըն ալ իր օրինաւոր ձեռովը միայն խոնարհել «սիրեմ»ը որուն անկանոն կիրառումին ամբողջ անտեղութիւնները հասկցած էր :

Եւ արտեւանունքներուն նիղակները միշտ ուղղած ըլլալով զինքը տէր-պապային ներկայութեանը տանելու կարող երիտասարդներուն, յաջողեցաւ վերջապէս նշանուիլ Թորոս Մշիկեանի մը հետ, գործը գիտցող սլղայ մը, որ կ'երեւայ թէ շատ չէր սիրեր կենսագրական հետազոտութիւններով զբաղիլ :

Հոս է որ Բոնսօն տիւ Թէրայի խոշոր բաւերուն և Քասիլիէ սը Մօնթէբէնի ոլորապապոյ դարձուածքներուն պէտք ունիմ ձեզ նկարագրելու համար թէ նախանձը—զօրաւոր

անդիմադրելի այս անգամ— ինչպէ՛ս սողոս-  
կեցաւ Ընկոյղեանի սրտէն ներս, երբ առա-  
ջին անգամ սրտոյտի մը միջոցին թեւ թեւի  
տեսաւ երկու նշանածները :

Կասկած չկայ թէ՛ նոյն ինքն Ընկոյղեան  
փախաքեր էր այսլուծումը, Ազնիւի հետ յա-  
րաբերութիւնները խղած աստեղը : Քրէտի Լիո-  
նէն ձգուած դրամօժիտը, որ մանկամարդ  
աղջկան անկումի անցեալը ոսկեզօծելու նա-  
խասահմանուած էր, Ընկոյղեանի կողմէ տըր-  
ուած պարգեւ մըն էր, որպէս զի ուրիշ մը  
դայ ստորագրել ու փակագծել սիրոյ գործը,  
զոր ինք՝ Ընկոյղեան՝ չէր ուզեր օրինաւոր  
վիճակի վերածել : Փոխաբերութեամբ մը կա-  
րելի է ըսել թէ, Ընկոյղեան այդ Մնջիկեա-  
նին ձեռքէն բռներ ու բերեր էր գրեթէ,  
որպէս զի շարունակութիւն մը ստանձնէ Ազ-  
նիւի սրտին մէջ :

Եւ սակայն հիմա իր բոլոր զգացումները  
կը դիմադրէին մոռնին նախորդ թելադրու-  
թեանը : Ազնիւի ամիսներով հանդարտութեան  
մէջ ուռճացած գեղեցկութիւններուն հան-  
դէպ, իր հեշտասէրի զգայնութիւնները կը  
յաղթանակէին հաշուի բոլոր նկատումներուն  
ու ա՛յ իրեն համար անդիմադրելի պէտք մը  
կը հանդիսանար նորէն ինք ունենալ հմայքի  
այդ հրաշակերտը, որուն ամէն մէկ մանրա-  
մասնութիւնը կուգար պատկերանալ իր հըր-  
գենակ երեւակայութեանը առջեւ :

\* \*

Երբեք չսլիտի պախարակեմ գինքը : Ա-  
ռանց Ազնիւը առանձնութեան մէջ տեսած  
ըլլալու յաւակնութիւնը արտայայտելու,  
պարզապէս աչքերուս վկայութեամբը կրնամ  
ղծել վստահեցնել թէ՛ աղուոր աղջիկը իր  
արդուգարդին մէջ գիտել կը բաւէր գուշա-  
կելու համար ձեւի սխրալի ներդաշնակու-  
թիւնները, որոնք Բրաքսիտէլ մը հիացնելու  
չափ կանոնաւոր էին : Այդ հիմնալի կիսար-  
ձանը, որուն կնոջական շնորհներու բարձրա-  
ւանդութիւններ բերնի ջրեր կը վազցնէին  
(գեղեցկագիտական տեսակէտով), կասկած  
չկայ, և ոչ թէ մահացու զգայնութիւննե-  
րով, այն շնորհալից հասակը՝ նուրբ ու լե-  
ցուն միանգամայն՝ զոր մաստաղ տունկի մը

չսլիտի նմանցնեմ, որովհետեւ տունկը պատ-  
ւուած կ'ըլլայ այդ նմանութիւնով և ոչ թէ  
աղջիկը, կը բաւէին հաւատքի բերել ամե-  
նէն անդգաներն իսկ :

Ու եթէ նուաստ վիպագիրս ենթադրու-  
թիւններով միայն այսքանը կ'ըսեմ, դիւրու-  
թեամբ կը հասկցուի թէ որքան աւելի դնա-  
հատող մը կրնար ըլլալ Ընկոյղեանը, որ բո-  
լոր այդ թագուն հարստութիւններուն կա-  
տարեալ գիտակցութիւնը ունէր :

Մի՛ զարմանաք ուրեմն երբ ձեզ ըսեմ թէ՛  
կամքին ու զգացումներուն միջեւ բուռն ճա-  
կատամարտէ մը ետքը, որուն մէջ Սըտանի  
անձնատուութիւնը վիճակեցաւ կամքին, Ըն-  
կոյղեան իրիկուն մը Քաշեմձիին տունը գնաց,  
դեղչելի պօծօններու մասնագէտին ընկերակ-  
ցութեամբ Ազնիւին այցելելու համար :

Քաշեմձիի աշխարհահռչակ կենցաղագի-  
տութիւնը չէր ներեր բնականաբար, որ խո-  
ջընդոտ ըլլար երիտասարդներուն խօսակցու-  
թեանը : Հետեւաբար՝ քանի մը վայրկեան  
անոնց քովը մնալէ ետքը ներդուլութիւն խնդ-  
րեց՝ իր յաւիտենական բարի սովորութեանը  
համեմատ լեւը երթալ ու լուսնի գիշերը,  
դեփիւռնի սիւզը վայելելու համար, ներո-  
ղութիւն՝ զոր կանխապէս շնորհեր էր արդէն  
Ընկոյղեան հարիւր ոսկիի նոր պօծօ մը զեղ-  
չելու խոստումին հետ մէկտեղ :

Սուանձին մնալնուն պէս, զգայնութեանց  
ուժգնութեան առաջ եկած բուռն շարժու-  
մով մը՝ Ազնիւին մօտեցաւ Ընկոյղեան, թեւ-  
երը բանալով, որպէսզի զայն դրկէ :

Սակայն Ազնիւ՝ բոլորովին պաղարիւն՝  
երկու քայլ ընկրկեցաւ, ըսելով .

— Չիս ձգեցէ՛ք, կ'աղաչեմ, չէ՞ք գիտեր  
որ նշանուած եմ :

— Ես բրի գուն մի՛ ըներ, ըսաւ Ընկոյղ-  
եան, որ հիմա թուղի մը պէս կակուղցած  
էր. նորէն մէկտեղ ըլլանք :

— Մէկտեղ ըլլանք, պատասխանեց Ազ-  
նիւ հեգնոտ չեչուով մը, խեղճ ևս, շարաթէ  
մը կը կարգուիմ կոր :

— Ազնիւ՛ւ, տուն տեղ, կառք, սպասա-  
ւորներ, ամէն բան պիտի ունենաս, հարըս-  
տութիւնս գլեղ երջանիկ ընելու պիտի ծա-  
ռայէ :

— Տուն տեղ, կա՞ռք, սպասա՞ւոր... կը կարծես որ անոնց ամենուն ամուսնի մը ա- նունը չարժեքը չէ՞մ գիտեր, անգամ մը խաբ- ունցայ, հիմա ա՛լ զիս խաբել կարելի չէ :

Այն չամիչ աչքերուն ի տես, որոնք ծայ- րագոյն չարածճիւթեամբ մը կը ժպտէին այդ վայրկեանին, այն վեա կեցուածքն հանդէպ, որ առիւծ զսպող կիներու իշխողութեամբը կը սանձէր Ընկոյզեանի անհամբերութիւնները, երիտասարդ սիրահարին երեւակայութիւնը վայրկեան մը մոլորեցաւ դէպ ի մերձաւոր պատահականութիւնը. Ալինուր ընդհարեց իր գեղեցկութեան բոլոր շնորհներով՝ Մըն- ջիկեանի թեւերուն մէջ :

Այս պատկերին դիմաց՝ որ աւելի եւս սրեց իր նախանձը, Ընկոյզեան նորէն վազեց դէպ ի Ալինուր, գրեթէ խելակորոյս՝ այս անգամ անսպասելու զայն իր թեւերուն մէջ առնելու ապահովութեամբ, բուն կերպով մը բացագանչելով .

— Ե՛ս կ'առնեմ քեզի. ի՞մ անունս պիտի կրես :

Սակայն եւս ընկրկեցաւ նորէն Ալինուր՝ միշտ պտհելով իր պաղարիւնութիւնը, ձեռ- քովը դուռը ցուցնելով :

— Ծառ ուշ. նշանածս կը սիրեմ...

... Զպիտի ըսեմ թէ այն իրիկուն Ընկոյզ- եան ասորճանակի հարուածով մը գլուխը պայթեցուց : Այդ բաներուն մօտն շատոնց անցած է ժամանակին հետ մէկտեղ ապրող- ներուն համար : Սակայն կասկած չկայ թէ որ և է բան չկրցաւ իրեն մոռցնել տալ Աղ- նիւր, որ հիմա կատարելագէտ երջանիկ է տիկին Մնջիկեան անուան տակ, առանց եր- բեք յիշելու ընկոյզը՝ որու մարտդութեան համար անհրաժեշտ չըլլալուն կասկած չկայ :

Գ. Ա. Ն. Ն.

#### Ա. Ռ. Կ. Ա. Խ. Հ. Ա. Շ. Ի. Ի. Ն. Ե. Ր.

Մեր այն բոլոր գաւառային գործակալ- ներէն ու հեռաքնակ բաժանորդներէն, որոնց հետ առկախ հաշիւ ունինք, անգամ մը՝ ալ կը խնդրենք որ հաճին փութացնել իրենց պարտքը եղող գումարներուն առաքումը, եթէ չեն ուզեր որ Մասիսի նամակատուփին միջոցաւ գրենք իրենց, ինչ որ պիտի վշտա- ցնէր զիրենք :

## ԱՐՈՒՆՍՏԻ ԱՇԽԱՐՀԷՆ

«ՏԵ ԼԱ ՌՕՇԵՓՈՒՔՕ-ԼԻԱՆԿՈՒՐ»Ի ԴՈՒՔՍԻՆ ԱՐՁԱՆԸ

Այս վերնագիրը կարդացողը պիտի կար- ծէ թէ գեղարուեստական գլուխ-գործոցի մը վրայ պիտի խօսինք հոս, մինչդեռ մեր նպատակը բոլորովին տարբեր է :

Այդ արձանը, որ Բարիդէն 75 քիլօմէթր հեռու Կիանքուրի մէջ կը դանուի, գեղար- ուեստի տեսակէտով հրաշալիք մը չի ներ- կայացնէր արդէն : Անիկա, մարմարէ քառա- կուսի պատուանդանի մը վրայ կանդնած, 2,70 մէթր բարձրութեամբ, պզնձէ պարզ արձան մըն է, որ դուքսը կը ներկայացնէ՝ աջ ձեռքը սալի մը վրայ կրթնցուցած, իր- բեւ խորհրդանիշ արհեստական աշխատու- թեանց և միւսովը՝ կիսածալ թուղթ մը բլու- նած ի յիշատակ Ֆրանսայի մէջ պատուաւորին առաջին ներմուծողը ըլլալուն :

Մարմարեայ պատուանդանին չորս կող- մերուն վրայ, որոնց անկիւններէն յորդ աղ- բիւրներ կը հոսին, հետեւեալ արձանագրու- թիւնները քանդակուած են .

Ճակատը .

François-Alexandre-Frédéric, Duc de la Rochefoucauld-Liancourt

Pair de France

né le 19 Janvier 1747

mort le 11 Mars 1827

il faut aider tout ce qui est utile,  
il faut attacher son nom à tout  
ce qui est bon.

Աջ կողմը .

Fondateur des écoles d'Arts et Me-  
tiers 1780

Caisse d'Épargne

Ձախ կողմը .

Introduction de la vaccine en France  
1800

Enseignement Mutuel

Ետեւը

Au bienfaiteur de l'humanité

Լա Ռօշֆուքօ Դուքսին անունը, հակա-

ուակ Թրանսայի մէջ մարդկութեան բարերար մեծ համբաւին և հանրային երախտագիտութեան արժանացած ըլլալուն, բոլորովին անձանօթ մնացած է մեր մէջ, սա միակ պատճառով թէ անիկա վէպ, բանաստեղծութիւն կամ ուրիշ այս տեսակ գիքեր գրած է իր կեանքին մէջ:

Ասկէ հարիւր քսան տարի առաջ, երբ Դուքսին ձեռքով առաջին արհեստից վարժարանը կը հիմնուէր Թրանսայի մէջ, երկիրը՝ հակառակ իր քաղաքական հզօր կացութեան՝ ճպտարարուեստի տեսակէտով շատ ետ մնացած էր այն ատեն: Այնպէս որ Թրանսա իր մեքենաները կառավարելու համար դրացի Անգլիոյ ժողովրդեան աջակցութեանը պէտք կունենար միշտ, ուրկէ շատ մը վարպետներ հոն եկած՝ բարձր ամսաթուղակներով կ'աշխատէին գործարաններու մէջ:

Լիանքուրի Դուքսը հեռատես հոգիով մը ուսումնասիրած ըլլալով երկրին անտեսական զարգացման պահանջները, գտած էր վերջապէս այն «Մեծ պակասը», որուն գոհացում տրուելով Թրանսա պիտի կրնար ընկերային աւելի բնդուն, աւելի նախանձելի վիճակի մը հասնիլ և ճարտարուեստը երկրին մէջ զարգանալով մրցիլ դրացի ժողովուրդներու հետ, որոնք այն ատեն իրմէ շատ աւելի առաջ գացած էին այդ ճիւղերուն մէջ:

Դուքսը ամէն կերպով համոզուած թէ երկիր մը ճշմարիտ յառաջդիմութիւնը իր քաղաքական և անտեսական ոյժերուն հաւասարապէս զարգացումէն կախում ունի, Անգլիա ըրած ճամբորդութենէն վերադարձին՝ առաջին գործը ըրաւ արհեստից վարժարան մը հիմնել իր Մօնթանսերի ագարակին մէջ, ծրագրով քիչ շատ նման Անգլիոյ մէջ տեսածներուն:

Այդ հաստատութիւնը, որ ապագային ֆրանսական ճարտարութեան զարգացման ամենէն մեծ միջոցը պիտի ըլլար, իր սկզբնաւորութեանը մէջ շատ անշուք և լքեալ վիճակ մը ունեցաւ: Վերջէն հասկցուելով անոր մեծ օգտակարութիւնը, կառավարութիւնը ուղղակի իր հսկողութեանը տակ առաւ զայն՝ անոր նիւթական և բարոյական

մատակարարութեան գործը ինքն ստանձնելով:

Քիչ ատենուան մէջ ուրիշ երկու արհեստից վարժարաններ ալ բացուեցան, նոյնպէս կառավարութեան ծախքով և զատ զատ կեդրոններու մէջ:

Լա Ռօշֆուքօ Դուքսը, որ արհեստից վարժարաններու ընդհանուր տեսուչ կարգուած էր այն ատեն, մինչեւ կեանքին վերջը ամէն տեսակ նախանձի և ատելութեան խղճնդոսներու դէմ դնելով, աշխատեցաւ որպէս զի այդ վարժարանները օր ըստ օրէ աւելի բարեկարգ և իրենց նպատակին յարմար վիճակի մը մէջ դրուելով, երկրին պահանջներուն գոհացում տուող աստիճանի զարգացման մը հասնին: Այս կերպով Դուքսը իր խոր ծերութեան մէջ անգամ այդ նպատակին իրագործման համար ո և է ջանք չի խնայելով յաջողեցաւ վերջապէս իր փափաքին հասնիլ և իրաւաբար արժանացաւ բարերարի մեծ անունին:

Հիմա Թրանսայի մէջ հինգ արհեստից վարժարաններ կան, որոնք մինչեւ ներկայ տարոյս սկիզբը 24,410 շրջանաւարտ տուած են երկրին:

Աշխատութեան այդ ահագին բանակը աշխարհի ամէն կողմերը ցրուած, ինչ թանկագին ծառայութիւններ մատուցած է ընդհանուր մարդկութեան, մասնաւորապէս իր երկրին, ինչ նոր նոր մեքենաներ հնարած են անոնք, ճարտարութեան ինչ վիթխարի գործարաններ հիմնած, հանրային գործերու ինչ հոյակապ ընկերութիւններ հաստատած են: Մարդ կը հիանայ, չի կրնար իր սքանչացումը զսպել, երբ միտքը կը բերէ անոնց այս բազմազան օգտակար գործերուն անհուն ու անսահման շարքը:

Այդ 24,410 շրջանաւարտները հիմա յարգալի պատկառանքով մը կը յիշեն իրենց բարերարին՝ Լա Ռօշֆուքօ Դուքսին անունը, որուն յիշատակը իրենց, ինչպէս նաեւ բոլոր Թրանսայի ժողովրդեան սրտերուն մէջ միշտ վառ, միշտ սիրելի մնացած է և պիտի մնայ ասկէ վերջն ալ:

Դուքսը, ինչպէս որ գրուած է արձանին

վրայ, 1827 մարտ 11ին մեռած է 80 տարեկան հասակին: Այդ յարգելի ծերունիին դադար իր աշակերտները մինչև դերեզման իրենց ուսերնուն վրայ տարած են: Բայց ցաւալի է հոս յիշատակել թէ դուքսին թշնամիները, նախանձի և սոսկութեան գձուձ զայրոյթով մը համակուած, անոր մահէն վերջն ալ ուզեցին վրէժ լուծել անկէ և նուիրական պարտականութեանց ամենէն տարրական պայմաններուն դէմ մեղանջելով, անոր յուղարկաւորութեան ատեն միջադէպեր յարուցանելու պատճառ եղան:

Դուքսին մահէն 33 տարի վերջը իր բարերարեանքէն մէկը՝ Լուի Բուալօ՝ անոր յիշատակարան մը կանգնելու նպատակաւ 40,000 ֆրանգ նուիրեց: Այն ատենուան արհեստից վարժարանի աշակերտները իրենց երախտագիտութեան ապացոյցը տալու յարմար առիթ մը նկատելով այս պարագան, բնաւ ջանք չի խնայեցին որպէսզի շուտով իրագործուի այդ նպատակը և վերոյիշեալ 40,000 ֆրանգին վրայ ուրիշ նուիրատուութիւններ ալ աւելնալով 1861ին արհեստից վարժարաններու հիմնադիրը իր արձանը ունեցաւ խանդավառ ու գեղեցիկ բացման հանդէսով մը, Լիանքուրի մէջ, իր սիրած ու ապրած երկիրը, ուր կանանչ ծառերու շուքին տակ համեստ գերեզմանի մը մէջ ամփոփուած է նաև այդ մեծ բարերարին մարմինը:

ԵՐՈՒԱՆԻ ԶԱՎՈՒՇԵԱՆ

## ՉԱՂՕՐԳԱՅՆԸ



Հիմակ որ ալ, աւաղ, գիտեմ  
Թէ չես սիրեւ ֆերդոյն հիւանդ,  
Ոյս մը չունիմ ես ֆեզի դեմ.  
Լըփումն օրեմս մ'է հընաւանդ:

Ես ա'լ հիմակ ֆեզ առանձին  
Կը սիրեմ. եւ՝ անկաւելի  
Ու անհրիտուր սիրոյս սանձին  
Տակ՝ կըմբոյսնեմ սեռս աւելի:

Երջանիկ եմ, որովհետեւ  
Ամեն բաճի մեզ ֆեզ միայն  
Պիտի տեսնեմ ու յարասեւ  
Վրադ պիտի խօսիմ լուելայն:

Եւ ոչ մեկէ մը պիտի ֆեզ  
Նախանձիմ ես, ֆանգի ո'չ ոք  
Կարող է ֆեզ սիրել այնպէս  
Ինչպէս որ ֆեզ կը սիրեմ լոկ:

Յ

## ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԼՅՈՒԱՆ ՎԻՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Մեր այս շաբթուան «Խմբագրական Նօթեր»-ու բաժինը ամբողջովին կը նուիրենք այն Տեղեկագրին զոր Օրմանեան Ս. Պատրիարքը խմբագրած է՝ Ս. Հայրապետին ուղղելու համար իջմամբին, պարզելով տխուր կացութիւնը իրենց ամուսիններէն լքուած դաւառացի կիներուն և դարման մը խնդրելով Ն. Ս. Օծութենէն: Պատրիարք Սրբազանը որ գաւառներու մէջ իր վարած հովուական պաշտօններու միջոցին մօտէն զննած, ուսումնասիրած է խնդիրը, իրական կեանքի վրայէն, և Պատրիարքական պաշտօնին զբաղումը անցնելէն ի վեր ալ Առաջնորդներէ և գաւառային ու գիւղական անկիւններէ իր ստացած անհամար նամակներէն ամբողջացուցած է այդ ուսումնասիրութիւնը, կատարեալ գիտակցութիւն ու հեղինակութիւն ունէր կատարելու այս տեսակ աշխատասիրութիւն մը, — ինչպէս կերեւայ նոյն իսկ այն ամփոփումէն զոր կը փութանք հրատարակել: Բուն իսկ տեղեկագիրը գրաբար խմբագրուած է, եօթը մասերու բաժնուած: Աւասիկ անոնց իւրաքանչիւրին ամփոփումը.

Ս. Պատրիարքը իր տեղեկագրին Ա. մասին մէջ կ'ըսէ.

Դաւառներու մէջ, մանաւանդ այն տեղերը ուր երկրին արգասաբերութիւնը նուազ է, ապրուստի նուազութիւնը մղած է տեղացի այրերը երթալ մայրաքաղաք եւ ուրիշ շահաստաններ ի խնդիր գործի եւ շահու, և կատարել ծանր և դժուարակիր աշխատութիւններ զորս քաղաքին բնակիչները կը զգուշանան ստանձնելէ, մանկէ տուններու և կամ վաճառատուններու ծառայութեան, կամ ձեռնարկել այն տեսակ զբաղումներու որոնք հաստատուն գործատուի մը չունին, այլ ու

րական վարձքով և տարուեր հանգամանքով կը կատարուին աշխատութիւնները: Եւ որովհետեւ առոյգ երիտասարդներուն կը յարմարէր այդ տեսակ պանդխտութիւնը, ընդհանրապէս երիտասարդ գաւառացիները իրենց ամուսնանալէն հազիւ մէկ քանի տարի կամ ամիս անցնելէ ետքը, հրաժեշտ կուտային իրենց ընտանեկան յարկին, և իրենց մօն կամարդ ամուսինները և զաւակները թողնով կ'երթային հեռաւոր տեղեր, իրենց և իրենց ընտանեաց պարուարը հայթայթելու և մէկ քանի տարի վերջը մէջըբերին ոսկելից կամարով վերադառնալու խոստումով: Խորհուրդը գեղեցիկ էր, եթէ մէկ քանի տարի աշխատութենէ և խնայողութենէ ետքը ամուսինը տուն դառնար՝ ընտանիքին սէրէն մղուած և բարքի ապականութենէ անարատ մնացած: Բայց մարդ չի կրնար իր գոգին մէջ կրակ ծրարել և չայրիլ: Կայտառ երիտասարդներ, իրենց ծննդավայրի ընտանեկան նեղ պայմաններէն հազիւ զերծած և քաղաքի աղմկալից կեանքին մէջ նետուած, իրենց ժամանակը կ'անցընեն ստորին վայրերու մէջ ապականող ընկերներու հետ և չուտով կը սայթաքին և իրենց ցորեկուան շահը կը վատեն գիշերուան հաճոյքին համար, կը մոռնան կին և զաւակ, ինքզինքնին անարար կը կարծեն իրենց ծնողքին և աղգակնաց հանգէտ և երկար տարիներ կը մնան օտարութեան մէջ, պանդխտութեան դառն կեանքը նախընտրելով գիւղական ընտանեկան անուշ կեանքին: Ահա, առաջին և մեծ վտանգը որուն օրինակները բազմաթիւ են:

Բ.—Ասոնցմէ անոնք որ ի սպառնչէն կորսնցուցած իրենց ընտանիքին յիշատակը, և սիրտերնին կը ձմրուի, իրենց ամուսիններուն, զաւակներուն և ծնողքներուն սիրովը, անոնք ալ պատրաստ դրամ չունին, որպէսզի պարդերու ելլեն ի դարձին, կամ այնպիսի գործ մը ունին զոր չեն կրնար ըստ կամի ձգել և կամ այդ գործը ձգելով մեկնիլ իրենց վնասակար կը տեսնեն. ուստի կը բաւակնանան երբեմն երբեմն իրենց ընտանիքին դրամ զրկելով և ինքզինքնին բռնադատուած կը կարծեն պանդխտութեան մէջ մնալու: Բայց իրենց տան մէջ կը շարունակեն անձկութիւնը. անընկեր և անպաշտպան կը մնայ կինը, զաւակները՝ լքեալ և անտերուշ, ծնողքը անօգնական և ծանրաբեռնուած, ար-

տերու աշխատութեան համար բազուկները պակասած, այնպէս որ տարբերութիւն մը չստի ըլլար թէ այրը իրենները մոռցած է թէ պահած է անոնց յիշատակը մտքին մէջ՝ անպըտուղ և անօգուտ:

Գ.—Պանդխտութիւնը երկարելու ուրիշ պայմաններ ալ կան, ի մէջ այլոց առուելաւորն և գլխաւորն շահու անակնկալութեամբ տարաշխարհ գացողներու մասին, որոնք զրկուած են իրենց ընտանիքէն, և ընտանիքնին զրկուած է իր գլխաւորէն: Այսպիսիներու մասին եթէ մեղադրանք ալ չըլլայ, տըխուր իրողութիւնը նոյնն է միշտ:

Դ.—Ահա ազօտ պատկերը գաւառային վիճակներու ընտանեկան խեղճութեան, որոնց մասին վիճակային առաջնորդները թախծալից նկարագրականներ կը զրկեն, թո՛ղ ամենօրեայ հառաչանքները լքեալ կ'իններու ևն. որք մերթ կը կորսնցնեն իրենց ամուսնական հաւատարմութեան սրբութիւնը, և մերթ իրենց դաւանութիւնն ալ միասին: Անհամար է այսպիսիներու բազմութիւնը: Վանի, Մուշի, Ակնայ, Արապկիրի, Խարբերդի, Սղերդի, Չմլիածագի, Բդիի, Տրապիզոնի, Սեբաստիոյ և Նիկողայոսի վիճակները. նաև Աղթամարայ և Կիրիկիոյ թեմերը ոչ թէ հարկւաւորներ այլ և հաղարաւորներ կը համրեն իրենց ամուսիններէն լքուած կ'իններու, որոնց ամուսինները արեւուած են մայրաքաղաքիս և ուրիշ քաղաքներու, և օտար երկիրներու մէջ, մինչև Ամերիկա: Ամէն օր Պատրիարքարան կը հասնին դանգաւաններ, ամբաստանութիւններ, թախանձանքներ և մինչև իսկ սպառնալիքներ լքեալ կ'իններու, որոնք կը պահանջեն կա՛մ իրենց ամուսիններուն վերադարձը եւ կամ իրենց ամուսնական կապին խզումը, սպառնալով նոյն իսկ օրէնքէ դուրս դարման մը վնասել իրենց անտանելի կացութեան. վիճակային առաջնորդները, տեղեկագիրնսրով դարման կը խնդրեն Կեղրոնական Վարչութիւնէն: Բայց ի՞նչ կրնանք գործել և հրաւիրել:

Ե.—Խրատ և յորդոր չառ արուեցաւ մեր կողմէ, յուսադրութիւններ ալ ընծայուելով, բայց տարիները կ'անցնին և անոնք արդիւնք չեն տեսներ: Առձեռն պատրաստ նպաստներ բաշխուեցան, այդ լքեալներուն և անոնց դա-

ւակներուն օրապահիլը հոգալու համար : Բայց նպաստներն ալ չափ մը ունէին , և բարեւէրներու նուիրատուութիւններն ալ մշտնջենական չէին : Եւ ինչպէ՞ս կարելի էր խորհիլ թէ՛ հնար է անընդհատ եւ անորոշ ժամանակաւ բաղմամբիւ տուններու պէտքը հոգալ : Ի հարկին դժուարութիւնները հարթելու և գերագոյն վճռով խնդիրները պարզելու համար , եկեղեցական կանոնները և պայմանները չեն բաւեր խնդրանքներու բազմութեան և շփոթութեան , որոնցմով երկու կողմէ ամուսնալուծումը կը խնդրուի : Ոչ միայն լքեալ կիներ ալ չեն հանդուրժեր կրել այն ամուսիններու անունը որ մէջտեղ չկան և խնամք չեն տանիր անոնց , այլ և պանդխտացող այրերն ալ , իրենց կիներու մասին ասկէ անկէ լուրեր քաղելով , զանոնք մուրեալ ցուցնել կուզեն , որպէսզի չքմեղանք գտնեն իրենց ոչ-օրինաւոր յարաբերութիւններուն : Եթէ ոչ անհնարին՝ զմէ շատ դժուարին է ստուգել լքեալ կիներու , մասնաւանդ պանդխտացող այրերու կենցաղը : Ուստի պէտք չկայ պաշտօնական գործողութեամբ սովորական եղանակներով քննութիւն կատարել , դատարան կազմել եւ լքեալ կիներու թշուառութենէն առաջ եկած խնդիրները լուծել :

2. — Եւ որպէս զի գրութիւնս չափազանց երկարելով չհռանանք մեր բուն դիտումէն , ահա՛ խնդրոյն ծանրութեան հանգամանքը՝ հակիրճ խօսքերով . —

Խնչպէս կարելի է պանդխտութիւնը վերացնել բոլորովին՝ երբ անիկա դաւառներու մէջ կարօտեալներու ապրուստի հայթայթման պահանջը եղած է : Խնչպէս կարելի է մերայինները զրկել քաղաքներու և շահաստաններու աշխատութեանց դիւրութիւններէն և շահերէն , երբ ցեղով տարբեր բնակակիցներ օգուտ կը քաղեն : Խնչպէս կարելի է պանդխտողները ազատ պահել շահաստան և նաւահանգիստ քաղաքներու ապականեալ վայրերու մոլութիւններէն : Խնչպէս հնար է օրէնքի խտութեամբ վարուիլ այն կիներու հետ , որոնք լքուած եւ անտէրունջ , անանկ եւ նոթի , ուղղութենէ յուսահատած , զրեթէ բռնադատուած կ'աղաքտեն իրենց սէրը , սիր-

տը եւ պատիւը : Խնչպէս կարելի է հաստատուն եւ տեւողական բարիք ակնկալել , եթէ առժամեայ կարգադրութեամբ , թոյլատրելն երկու կողմերուն ալ՝ նոր կենցաղի դիւրութիւնները , մինչ բացայայտ է անտեղութեանց վերականգնումը : Օրէնք է իրաւունք եւ վայելք տալ ապօրէն կեանքի մէջ դաւաճողներուն , որպէս թէ կամաւոր մեղքերը կարող ըլլային առաջնորդել արդարութեան : Օրէնք է լուծել ամուսնութիւնը այնպիսիներուն , որոնք այդ բանը չեն ուզեր , այլ միայն արտաքին պարագաներու բերմամբ ո'չ պահուիստը կը վերադառնայ և ոչ միացեալները կը պանդխտին : Պատշաճ է կարծել թէ հաւանական բարիքներ պիտի ծագին լքեալ կիներու , անոնց կրկին ամուսնութիւնը արտօնուելով , և միւշ ամուսիններու և կոյսերու ամուսնութիւնները կը նուազին հետզհետէ , ինչպէս կարելի է լքուածներու եւ զաւակներով ծանրաբեռնուածներու ամուսնութիւնը նախադասել : Պատշաճ է հրամաններ տալ հիմնուելով այնպիսի հանգամանքներու վրայ , որոնք թէպէտ հաւանական են եւ հաւանականագոյն , բայց չեն եղծաներ հակառակին հնարաւորութիւնն ալ , և ասոր ստուգուելովը անլուծանելի դժուարութիւններ կը հանեն տրուած հրամանին դէմ :

Է. — Այս ամէնը պարզելով Ն. Ս. Օծութիւն Մայր-Աթոռոյ Հայրապետին , Ս. Պատրիարքը կ'ըսէ թէ սովորական կանոնները չեն կրնար լուծել խնդիրը : Արատասովոր պարագաներու արտասովոր դարմաններ պէտք են , ուստի , ինչպէս ժամանակաւ երանաչնոր Հայրապետն մեր իմաստասէր Յովհաննէս Խոթեամեայ բացակայութեան կանոնը հիմնադրած է , նմանօրինակ կանոն մը և հրաման մը Մայր-Աթոռէն՝ կարող է միայն աղէտին տանիլ դարման , որուն ի խնդիր կը մատչիմք առաջի Ս. Օծութեանդ և կը հայցեմք ցանկացեալ վճիռդ , և միանգամայն հայրական օրհնութիւններդ ի վերայ մեր և ամենայն ժողովրդոց մերոց հարազատաց , Առաքելական ուղղափառ Սուրբ Աթոռոյդ Հայ Եկեղեցոյ :

Արսոմաք Կ. Ս. ԻԹԻՒՆԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՆՆԻՔ Օրագրի

# Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՅԱՆ ՍՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԴ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

## Հ Ի Դ Ե Հ Ի Ճ Ի Դ Ղ

|                                   |                |     |
|-----------------------------------|----------------|-----|
| Մինչև 1899ի վերջը հատուցեալ վեասք | 240,000,000    | Ֆր. |
| 1899ին գանձուած ապահովագրին       | 19,500,000     | »   |
| Դրամագլուխ եւ պահեստ              | 105,000,000    | »   |
| Ապահովագրեալ դրամագլուխ           | 18,000,000,000 | »   |

## Կ Ե Ն Ս Յ Ճ Ի Դ Ղ

|                                   |             |     |
|-----------------------------------|-------------|-----|
| Մինչև 1889ի վերջը հատուցեալ վեասք | 99,000,000  | Ֆր. |
| Ընթացիկ ապահովագրութիւնք          | 253,000,000 | »   |
| Դրամագլուխ եւ պահեստք             | 150,000,000 | »   |

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Ինքիոն» ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՆԵԼՔԻ ՄԵՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՒՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղջեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադասեց քան ուրիշ ո՞ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Ինքիոնի ապահովագրողը ՉԵՐՄ ԵՆ այն վնասներէն եւ յուսալարութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան զբաղմանը եւ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Գաբրըն Օղլու

Մամուսիւղ, Դալաթիա, Ինայէթ Սան, գործակալ Միհրան էֆ: Դալիթեան:

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԿԻՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅՃ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական վարժարանին

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանքան արաքսման

Պալպալեան ամէն օր ակոսայի ամէն տե-

սակ հիւանդութիւններով տառապողները

կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեք-

շաբթի մինչեւ ժամը 5: Դիւերուան ո եւ է

ժամուկ կարելի է դիմել: Պալպալեան կ'ե-

րաշխաւորէ իր լեցուցած ու շինած ակոս-

ները: Յորեկները ակոսայ քաշել տալու հա-

մար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին

կամքէն կախեալ է:

Աղփասներուն ձի

“AU TALON D'OR”

Օ ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՉԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱՅՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՏ ԵՒ ԿԱՆԱՆՏ ՀԱՄԱՐ

Նաեւ կաղերու համար պատրաստուած

Կալաքա, Վոյվոսա փողոց, քիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան

համաձայն կօշիկներու յանձնարարութեան

համար, — մասնաւոր չափու վրայ շինուե-

լիք, — կ'արժէ անգամ մը այցելել սոյն վա-

ճառատունը:

# Կ. Յ. ՏԵԻՐՄԵՆՅԱՆ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ ՍԱՄՍՈՂ

Կը ստանանք վաճառականական պիտոյից,  
սպագրական գործերու պատրաստութեան  
հոգը.

Դի՛ն ԴԻԻՐԱՄԱՏՁԵԼԻ

Մաճուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 50% զեղչ.

Ծանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ մէջ  
մասամբ:

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԵԻՐՄԵՆՅԱՆ

ՍԱՄՍՈՂ

## ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

### Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ


ԲԵՐԱ, ՄԵԾ-ՓՈՂՈՅ, Թ. 200

ԿԱԼԱԹԱՍԵՐԱՅԻ ԼԻՍԷԻՆ ԴԷՍ

Դե. Եւ. Շք. օրերը առաւօտեան կանու-  
խեն մինչեւ իրիկուան Ժ. 11 1/2

Բե. Դե. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի  
մեքենայի մնայ, քայց էական կէտն է լաւ մեքե-  
նայ մը սնանկայ, որովհետեւ լաւ մեքենայ  
մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մա-  
տուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ան-  
վերջ զստեցնողութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:  
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

## ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՓԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, սափ ու ուսի եւ ձեռքի  
միանգամայն միմեաներ  
կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն ա-  
ւելի կապարեղադրծուածը, հաստատունը եւ դիւ-  
րագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝  
ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճա-  
ռատանց մէջ՝

ՇԱՐԼԱՍԵՐԱՅԻ ԼԻՍԷԻՆ

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱՍ

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԱԻԻՏԱՐ

Չաբշը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր ֆալաւներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,  
Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղուլուի տունը:



# ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԻՆՇ, ԿԵՍՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՇՔ

|                                                   |             |       |
|---------------------------------------------------|-------------|-------|
| Ընկերության գրամագլուխը, ամբողջապես վճարուած      | 10,667,667  | Ֆրանք |
| 1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիւններ ու տոկոս | 54,000,000  | »     |
| Երաշխաւորութեան գումար                            | 122,000,000 | »     |
| Ապահովագրեալներուն վճարուած գումար                | 249,400,000 | »     |

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Քարաիիմ վրայ, Մախսսան հիմ սեղը

Ընդհ. ԲՅՈՒՄ  
Ա. ՀԻՒՐՄԻՒԶ

Ընդհ. Գործակալ  
ՔԵՆՏՈՐ ՌԵԲԵԼՆ

## ՖԻՆԱՆՍ ԷՍՏԱՆԵՕԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Հրդեհի եւ Կեանքի Ի ԲԱՐԻՉ

Դրամագլուխ՝ 63,228,000 Ֆրանք: Դրամա-  
տուն Ի Կ. Պոլիս՝ Քրէտի Լիօնէ

Դեր-Գործակալ Կ. Պոլսոյ ճիւղին

ՔԱՌԼՕ ԱՀՆԱՄԵԱՆ

Կալաթա, Վոյվոսա փողոց Թիւ 103

## ԱՆԳԻՐԸ

Ու եղաւ որ հարց ըլլայ թէ ինչո՞ւ  
Չատկին հաւկիթը կը ներկուի.— Կ'ըսէք,  
Անգիր Դայրութեան նոր տպուած Բ. հա-  
տորի ութերորդ տետրին մէջ գրուած է:

Դիմել առ Վահան վրդ. Պարտիզակ-  
ցի, Պաղտատեան գրատուն, Պոլիս,  
Սուլթան Համամ, Թիւ 14:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

## ՏԻԿԻՆ ՌՕՏԷ

Թարգմանեց ՋԱՐՄԱՅՐ

Դադափարի անուշ վիպակ մը՝ փափ-  
կախօս եւ մեր հասարակութեան համար  
նոր հեղինակի մը կողմէ գրուած՝ ուր  
պատմուած ընտանեկան կեանքէ պարզ  
տուամի՜ն մէջ սրտայոյզ էջերը չէ որ կը  
պակսին, եւ որուն ընթերցումը աղնիւ  
ղգացումներ պիտի արթնցնէ սրտերու  
մէջ: Կեդրոնատեղին է Խաչիկ էֆ. Էն-  
ֆիէճեանի նոր Դրատունը՝ Պապը Ալի  
ճատտէսի Թիւ 6, Կը գտնուի բոլոր գը-  
րավաճառներու եւայլն. քով: Դին 100  
փարա, Բոսթի ծախքով 3 շրջ:

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՐԴԸ ԵՒ ԻՐ ՅԵՂԸ, հեղ. ԲրոՅ. Ա. Ալաբէխ, Թարգմ. Մ. Կ. Նազիկեան հեծ.  
Սեւային առողջաբանութեան կարեւորագոյն գիտելիքներուն վրայ խօսող սոյն ժողովոր-  
դական գիրքը երկրորդ տպագրութեամբ լոյս տեսաւ Ը. Մատթէոսեան տպարանէն: Դին  
5 շրջ: Վաճառման կեդրոնատեղին է Պալեմց գրատուն Կ. Պոլիս:

ԴՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ անգլիէրէնէ հայերէն, որ կը լրացնէ կարեւոր պէտք մը ուսա-  
նողներու, ճամբորդներու եւ առեւտրական գործով զբաղողներու համար: Դին 8 շրջ: Կը  
գտնուի բոլոր գրավաճառներուն քով: Կեդրոնատեղի Սագաեան տպարան, Կալաթա:

ՄԱՌՇ ՎԷՌԱՆՏԱ, դաշնակահար Ահարոն էֆ. Մըսրուխանի հեղինակած սոյն նուագա-  
տետրը կը ծախուի «Անտէրիպ» վաճառատունը՝ Պահճէ-Դարու եւ Ղալաթիա, Բախէնտին-  
կէր եւ Քրիսթիաիս Ի Բերա, եւ Սկիւտար հեղինակին բնակարանը:

# ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ . ԹԱԳ . ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ . ԸՆԿ .

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Ն . Ա . Բ . ԳՈՒԲՍ ԼՈՌԻ ՏԷ ՊԱՎԻԷՌ

## ԼԱ ԷՍԹԵՐԵՅԵԱ

Ապահովագր . ԸՆԿ . ընդդեմ հրդեհի (Ի ՔԱՐԹԱՅԷՆ)

## ԱԼԼԵԱՆՑԱ

Ծովային ապահովագր . ԸՆԿ . (Ի ՃԵՆՈՎԱ)

Այն ընկերութեանց Դրամատունն է Ի Կ . Պոլիս , Գոէտի Լիօնէ

Ընդի . եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ . ՅԵՐԱՏԵԱՆ

Դրասնեակ , Պոլիս , Համօբուլօ խան , Թ . 52—53—54—55—56

### ՏՈՔԹՈՐ Լ . ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ-ՄԱՆԿԱԲԱՐՁ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց

(Վկայեալ Բարիզէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հիւանդութիւններ , կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ՝ վերջին կատարելագործեալ դրութիւններով :

Բարիզի , Նանսիի հիւանդանոցներուն մէջ երկար տարիներ օգնական-բժիշկի (էքսքերն) պաշտօնը վարած ըլլալով , գործնական ու փորձառական երկար ուսումնասիրութիւններ ընելէ վերջ , այս անգամ Կ . Պոլիս եկած եւ հաստատուած է Բերա , Թարլա Պաշը , Թիւ 136 :

Ծանօթ .—Հիւանդներ կ'ընդունին ամէն օր կէս օրէն վերջը իր ընակարանին մէջ , Ժամը 1—4 (Ը . Ն .) : Երեքշաբթի օրերը միեւնոյն ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հիւանդները :

15—20

### ԴԱՇՆԱԿԻ ԴԱՍ

Դաշնակահար օրիորդ մը , որ խիստ լաւ մէթոտ մը ունի նորալսարժները մարդեւոր դաշնակահարութեան , կը յափաղի այցելութեամբ դաս տալ տուններու մէջ : Դիմել՝ Մասիսի խմբագրութեան :

2—4

### HOTEL «FERAH»

### ՕԹԷԼ «ՖԵՐԱՀ»

Բրինքիքօ , Նիզամի պողոտային վրայ , ծովահայեաց , ընդարձակ պարտէզներու մէջ , վարձակալը , Առաքել Տերեկեան որ այսքան խնամօք կը վարէ Պոլիս Սուլթան Համամի հանրածանօթ նախկին Դասպար ճաշարանը , յանձն առած է նիւթական ամէն զոհողութիւններ ընել՝ իր բաղմաթիւ յաճախորդներուն հանդիստութեանը համար :

Դիմելը հալիւս . լաւ եւ մաքուր միտնող . պանդոկը ըսց է Եւրոպական մայր մէկէն սկսեալ :

4—10

ՏՈՔԹ . Ն . ՄԱՍԻՍ (Բերա , Թագսիմ փողոց , ք . 15) Բացի ծովորական ներքին հիւանդութիւններէ , կը դարմանէ մասնաւորաբար , նոր մեթոտներով եւ խնամով , ստամոքսի , աղեաց , միզային ճամբաներու հիւանդութիւնները , ջղային տկարութիւնները , գաղղիական ախտերը (սիֆիլիս եւ այլն) եւ մորթի հիւանդութիւնները : Հիւանդ կ'ընդունին ամէն օր կէս օրէ վերջը :